Արման Խաչիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2001-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր - ՀՀ-ԵՄ համագործակցություն, Եվրոպական հարևանության քաղաքականություն, գործընկերության և համագործակցության համաձայնագիր, վերափոխումներ, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, Հարավային Կովկաս, արտաքին քաղաքականություն, գործողությունների ծրագիր:

1990-ական թվականներին ՀՀ-ԵՄ հարաբերությունների հաջող մեկնարկն ամուր հիմք հանդիսացավ երկկողմ համագործակցության հետագա ընդլայնման համար: ԵՄ-ը, գիտակցելով հետխորհրդային երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, առկա դժվարությունները, փորձում էր բոլոր հնարավոր միջոցներով օգնել վերջիններիս՝ հաղթահարելու անցումային փուլի հետևանքները:

Եվրամիությունն ու նրա անդամ երկրները ներկայացնող բարձրագույն իշխանությունները Հայաստանը տեսնում էին ԵՄ-ի մեծ համայնքում ու պատրաստ էին աջակցել ՀՀ-ին դեպի ԵՄ ինտեգրման ճանապարհին: Այդ մասին էին նշել ԵՄ ներկայացուցիչները ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպումների ընթացքում 2001 թ. հունիսին Բրյուսելում: Այդ հանդիպումից հետո Եվրախորհրդարանի նախագահ տիկին Ն. Ֆոնտենը նորից հարկ համարեց կրկնել. <<ԵԽ-ն պատրաստվում է աջակցել Հայաստանին բոլոր այն բնագավառներում, որտեղ դրա կարիքն ունի>>: Ավելին, նա ասել է, որ Հայաստանը համարում է Եվրոպայի մաս թե՛ աշխարհագրական, թե՛ տնտեսական և թե՛ պատմական առումներով[1]:

ԵՄ-ի շահագրգռվածությունը ՀՀ-ի քաղաքական կայուն և տնտեսական բարգավաճման զարգացման համատեքստում արտացոլվեց նաև 2001 թ. դեկտեմբերին կազմված Երկրի ռազմավարական փաստաթղթում[2]: ԵՄ-ն հատկապես դրական էր գնահատում ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը՝ <<աստիճանական մերձեցումը ԵՄ-ի ձևաչափերին ու չափանիշներին>>[3]: Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի զարգացման և տարածաշրջանային կայունության ապահովման հիմնական խոչընդոտը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն է: ԵՄ-ն, ելնելով 2001 թ. Նախարարների խորհրդի որոշումից,

[1] Տե՛ս <<Ազգ>> , Երևան, 8 հունիս 2001, ուրբաթ, թիվ 105(2309):
[2] Տե՛ս Country strategy paper 2002-2006, National indicative programme 2002-2003 Republic of Armenia, 27 December, 2001, http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf.
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

հայտնում էր իր պատրաստակամությունը բոլոր հնարավոր միջոցներով նպաստել Հարավային Կովկասում հակամարտությունների լուծմանը[1]:

Երկրի ռազմավարական փաստաթղթի հետ մեկտեղ 2001 թ. ընդունվեց նաև 2002-2003 Ազգային ինդիկատիվ ծրագիր[2], որտեղ նախանշված էին Հայաստանին օգնություն տրամադրելու առաջնային ոլորտները: Ընտրվել էին երկու հիմնական ուղղություններ. վերափոխումներ համակարգային, իրավական և վարչական ոլորտներում, որն, իր հերթին, ուղղված էր ԳՀՀ-ում նախատեսված դրույթների իրագործմանը, կրթական համակարգի զարգացմանը և պարենային անվտանգության ծրագրի իրականացմանը: Այս համատեքստում ԵՄ-ի կողմից հատկապես կարևորվում էին ՀՀ կառավարության քայլերը իր օրենսդրությունը ԵՄ-ի օրենսդրությանը համատեղելի դարձնելու ուղղությամբ:

ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացմանը առանձնապես նպաստեց Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ բանագնացի ինստիտուտ ստեղծելը: Բանագնացի նշանակումը տեղի ունեցավ 2003 թ. հուլիսի 7-ին: Այդ պաշտոնը զբաղեցրեց ֆին դիվանագետ Հեյկի Տալվիտիեն: Հայաստանը ողջունեց նրա նշանակումը՝ հույս հայտնելով, որ դա նոր որակ կապահովի երկկողմ հարաբերություններում: Չէ որ այդ նշանակման նպատակն էր աջակցել ԵՄ-ի խորհրդին Հարավային Կովկասում համապարփակ քաղաքականություն մշակելու, կանխարգելելու հնարավոր նոր հակամարտությունները և փորձելու հնարավորինս սեղմ ժամկետներում կարգավորել դրանք: Հայաստանի համար հատկապես կարևորվում էր Հ. Տալվատիեի լիազորությունները, որոնք առնչվում էին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին:

ՀՀ-ԵՄ հարաբերություններում նոր էջ բացվեց 2004 թ. հունիսի 14-ին, երբ Հայաստանը հարավկովկասյան մյուս երկրների հետ ընդգրկվեց Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ՝ԵՀՔ) մեջ: Հայաստանի Հանրապետությունը ողջունելով ԵՄ-ի այդ քայլը՝ իր հերթին պատրաստակամություն հայտնեց ուսումնասիրել բոլոր հնարավորությունները, որ ընձեռում է ԵՀՔ-ն: ԵՀՔ-ի գործառույթներից էր քաղաքական համագործակցության արդյունավետության բարձրացումը ԵՄ-ի և գործընկերների միջև: Ծրագիրը խրախուսելու էր բոլոր վերափոխումները, որոնք օգուտ կբերեին այդ երկրներին տնտեսական և սոցիալական զարգացման տեսանկյունից: Տնտեսական օրենսդրության ներդաշնակումը ԵՄ-ի օրենսդրությանը նպաստելու էր ծրագրին մասնակից երկրների միջև տնտեսական և առևտրային անջրպետների վերացմանը, ինչն էլ, իր հերթին, խթանելու էր

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 4:
[2] Տե՛ս Country strategy paper 2002-2006, National indicative programme 2002-2003 Republic of Armenia, 27 December, 2001, http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf.

ներդրումների աճը և գործազրկության աստիճանի նվազումը[1]: Այսպիսով, Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ Հայաստանի ընդգրկումը ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղափոխեց որակական նոր փուլ, որտեղ Հայաստանի՝ արդեն որպես Եվրոպայի հարևան երկրի առջև բացվում էին նոր հորիզոններ:

Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորացման տեսակետից էական նշանակություն ունեցավ 2008 թվականի նոյեմբերի 5-6–ը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցելությունը Բրյուսել: Նոյեմբերի 5-ին ՀՀ նախագահը հանդիպում ունեցավ Եվրամիության խորհրդի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանայի հետ: Նրանք քննարկել են ՀՀ-ԵՄ հարաբերությունները, Նոր հարևանության քաղաքականության շրջանակում գործողությունների ծրագրի և ՀՀ-ում ժողովրդավարական ու տնտեսական վերափոխումների իրականացման ընթացքը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը, հայ-թուրքական քաղաքական երկխոսությանը վերաբերող հարցեր: Խավիեր Սոլանան կարևորելով տարածաշրջանում կայունության ու խաղաղության ապահովման խնդիրը՝ իր աջակցությունն է հայտնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցություններին ու հայ-թուրքական ընթացիկ երկխոսությանը: Նոյեմբերի 6-ին Ս. Սարգսյանը մի շարք կարևոր հանդիպումներ է ունեցել ԵՄ-ի հանձնաժողովի պատասխանատուների հետ[2]:

ՀՀ-ն նաև էական առաջընթաց էր արձանագրել ԵՀՔ-ի շրջանակներում 2006 թ. ստորագրված և 2007 թ.-ին ուժի մեջ մտած Գործողությունների ծրագրում[3] նախանշված հետևյալ ուղղություններում. վերափոխումներ հարկային և մաքսային քաղաքականության և վարչարարության, գործարար միջավայրի բարելավման ոլորտներում, որոնք բարձր գնահատականի են արժանացել ԵՄ-ի կողմից: Իսկ ԵՄ-ի ներդրումները խրախուսելու նպատակով ՀՀ-ն համաձայնագիր է ստորագրել Եվրոպական ներդրումային բանկի հետ[4]:

Ակնհայտ էր, որ 2008 թվականին ՀՀ-ն լուրջ առաջընթաց գրանցեց ԵՄ-ի հետ արտաքին քաղաքականության ասպարեզում, ինչի վառ ապացույցներն են քաղաքական բարձր մակարդակի երկխոսության խորացումը, խորհրդատվությունների նոր ձևաչափերի ստեղծումը:

Այսպիսով, 2001-2008 թվականներին ՀՀ-ի և ԵՄ-ի հարաբերությունները դրական առաջընթաց ունեցան, ինչն արտահայտվում էր երկկողմանի համագործակցության

---

[1] Տե՛ս Communication from the Commission. European Neighbourhood Policy.Strategy Paper, {SEC(2004) 564, 565, 566, 567, 568, 569, 570}, COM(2004) 373 final, Brussels, 12.5.2004, pp. 8-9, http://ec.europa.eu/world/enp/pdf/strategy/strategy_paper_en.pdf.
[2] Տե՛ս Նախագահ Սարգսյանի աշխատանքային այցը Բելգիայի թագավորություն և Եվրոպական կառույցները, 04.11.2008 - 06.11.2008, http://www.president.am/en/foreign-visits/item/2008/11/04/news-45/.
[3] Տե՛ս EU / Armenia Action plan, http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf
[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գործունեության 2008 թվականի ամփոփումը, Երևան, հունվար, 2009, http://www.mfa.am/u_files/file/reports/report2008.pdf.

սերտացմամբ գրեթե բոլոր բնագավառներում: Վերոնշյալ ժամանակահատվածը աչքի ընկավ բուռն զարգացումներով, որոնք հանգեցրին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև հարաբերությունների որակական նոր մակարդակի ձևավորմանը: Կարևորագույն իրադարձություններից էր ՀՀ-ի ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ, որը նոր էջ էր բացում երկկողմ համագործակցության համար: ԵՀՔ-ի շրջանակում հաստատված Գործողությունների ծրագիրը, արտացոլելով այն առաջնային ոլորտները, որ վերափոխման կարիք ունեին, իր ուրույն լուման ունեցավ ՀՀ-ում ժողովրդավարության հիմքերի ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության կուռ համակարգի ստեղծման, օրենսդրության կատարելագործման գործում: Անշուշտ, կարևոր նշանակություն ունեին երկկողմ բարձր մակարդակի քաղաքական երկխոսության հաստատումը, առևտրատնտեսական համագործակցության ընդլայնումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված ԵՄ-ի փորձերը: Այս ամենը ինքնըստինքյան վկայում է ՀՀ-ի և ԵՄ-ի միջև հարաբերությունների էական առաջընթացի մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Ազգ>> , Երևան, 8 հունիս 2001, ուրբաթ, թիվ 105(2309):

2. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գործունեության 2008 թվականի ամփոփումը, Երևան, հունվար, 2009, http://www.mfa.am/u_files/file/reports/report2008.pdf.

3. Նախագահ Սարգսյանի աշխատանքային այցը Բելգիայի թագավորություն և Եվրոպական կառույցները, 04.11.2008 - 06.11.2008, http://www.president.am/en/foreign-visits/item/2008/11/04/news-45/.

4. Communication from the Commission. European Neighbourhood Policy.Strategy Paper, {SEC(2004) 564, 565, 566, 567, 568, 569, 570}, COM(2004) 373 final, Brussels, 12.5.2004, http://ec.europa.eu/world/enp/pdf/strategy/strategy_paper_en.pdf.

5. Country strategy paper 2002-2006, National indicative programme 2002-2003 Republic of Armenia, 27 December, 2001, http://eeas.europa.eu/armenia/csp/02_06_en.pdf.

6. EU / Armenia Action plan, http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans armenia_enp _ap__final_en.pdf.

Арман Хачикян, **Взаимоотношения Республики Армения с Европейским Союзом в 2001-2008 гг..** В статье представлены развитие и углубление двусторонних отношений РА и ЕС с 2001 по 2008 гг.. Качественным изменением в отношениях между РА и ЕС стало включение Армении в Европейскую политику соседства (ЕПС) 14 июня 2004 года. В период с 2001-2008 гг. важное значение имели заинтересованность сторон в поддержании регулярного двустороннего политического диалога на высшем уровне, тесное торгово-экономическое сотрудничество, а также попытки ЕС урегулировать Нагорно-Карабахский конфликт. Все это само по себе указывает на существенный прогресс в отношениях между РА - ЕС с 2001-2008 гг..

Arman Khachikyan, Relations between the Republic of Armenia and the European Union in 2001-2008. The article presents the development and deepening of bilateral relations between the Republic of Armenia and the European Union from 2001 to 2008. Qualitative change in relations between Armenia and the EU has been the inclusion of Armenia in the European Neighbourhood Policy (ENP) on June 14, 2004. In the period of 2001-2008, important were the interest of the parties in maintaining regular bilateral political dialogue at the highest level, the close trade and economic cooperation, as well as the EU's attempts to settle the Nagorno-Karabakh conflict. All this in itself indicates significant progress in relations between the Republic of Armenia - EU 2001-2008.

Արման Խաչիկյան-պատմական գիտությունների թեկնածու, զբաղվում է Հայաստան-եվրոպական կառույցներ հարաբերություններով: